ՎԴ/5796/05/23

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՎՃՌԱԲԵԿ ԴԱՏԱՐԱՆԻ ՆԱԽԱԳԱՀ

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ԵՆԹԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԵՃԸ ԼՈՒԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

2 հոկտեմբերի 2023 թվական քաղաք Երևան

ուսումնասիրելով ըստ հայցի՝ Ալմաստ Ղազարյանի ընդդեմ ՀՀ Մասիս համայնքի, ՀՀ կադաստրի կոմիտեի՝ միջամտող վարչական ակտերը և դրանց հետևանքները անվավեր ճանաչելու պահանջի մասին, թիվ ՎԴ/5796/05/23 գործի ենթակայությունը որոշելու նպատակով այն Վճռաբեկ դատարանի նախագահին ուղարկելու վերաբերյալ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի՝ 2023 թվականի օգոստոսի 29-ի որոշումը,

Պ Ա Ր Զ Ե Ց Ի

<u>Գործի դատավարական նախապատմությունը</u>.

1. Ալմաստ Ղազարյանը 2023 թվականի հուլիսի 20-ին հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան ընդդեմ ՀՀ Մասիս համայնքի, ՀՀ կադաստրի կոմիտեի՝ պահանջելով հետևյալը. *«1) Անվավեր ճանաչել 05.02.2019 թվականի Նորաբաց համայնքի ղեկավարի N 17 որոշումը՝ «Համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի հողերից գույքային միավոր առանձնացնելու մասին»:*

2) 03-067-0046-0065 կադաստրային ծածկագրով հողամասի մասով մասնակի անվավեր ճանաչել 28.02.2019 թվականին Նորաբաց համայնքի ավագանու «Նորաբաց

համայնքի սեփականություն համարվող բնակավայրերի 0.40 ՀԱ հողամասերը բնակելի կառուցապատման նպատակով օտարելու և մեկնարկային գին սահմանելու մասին» N 11 որոշումը:

3) 03-067-0046-0065 կադաստրային ծածկագրով հողամասի մասով մասնակի անվավեր ճանաչել 05.03.2019 թվականին Նորաբաց համայնքի ղեկավարի N 40 որոշումը՝ «Բնակավայրի բնակելի կառուցապատման 0.56ՀԱ հողամասի աճուրդ վաճառք կազմակերպելու մասին»:

Որպես հետևանք անվավեր ճանաչել.

- *11.04.2019 թվականի Արձանագրություն N 3 «Հողամասն աճուրդով վաճառելու մասին».*
- *11.04.2019 թվականի ՀՀ Նորաբաց համայնքի ղեկավարի կողմից կայացված N 60 որոշումը «Աշոտ Պետրոսյանի հետ բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասի օտարման պայմանագիր կնքելու մասին».*
- *17.04.2019 թվականի Աշոտ Պետրոսյանի և Նորաբաց համայնքի միջև կնքվել է անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը.*
- *22.04.2019 թվականին 03-067-046-0065 կադաստրային ծածկագրով հողամասի վերաբերյալ ՀՀ կադաստրի կոմիտեում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումը (վկայական N 22042019-03-0059):*

4) Անվավեր ճանաչել 17.09.2019 թվականին Նորաբաց համայնքի ղեկավարի կողմից կայացված N 136 որոշումը՝ «Նորաբաց համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրի հողերից գույքային միավոր առանձնացնելու, նպատակային նշանակությունը փոփոխելու և հաստատավորելու մասին»:

5) Անվավեր ճանաչել 08.01.2020 թվականին Նորաբաց համայնքի ավագանու կայացրած N 02 որոշումը՝ «Բնակավայրի բնակելի կառուցապատման 1.01318ՀԱ հողամասի աճուրդ վաճառք կազմակերպելու մասին»:

Որպես հետևանք անվավեր ճանաչել.

- *12.02.2020 թվականի N 14 Արձանագրությունը «Հողամասն աճուրդով վաճառելու մասին».*

- *12.02.2020 թվականի Նորաբաց համայնքի ղեկավարի N 33 որոշումը՝ «Արթուր Ասատրյանի հետ բնակավայրի հողամասի օտարման պայմանագիր կնքելու մասին».*
- *12.02.2020 թվականի Արթուր Ասատրյանի և Նորաբաց համայնքի միջև կնքված անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը.*
- *24.02.2020 թվական 03-067-046-0077 կադաստրային ծածկագրով հողամասի վերաբերյալ ՀՀ կադաստրի կոմիտեում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումը (վկայական N 24022020-03-0024):*

6) Անվավեր ճանաչել 21.06.2018 թվականին Նորաբաց համայնքի ղեկավարի N72 որոշումը՝ «Համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի հողերից գույքային միավոր առանձնացնելու մասին»:

7) Մասնակի՝ 03-067-0046-0056 կադաստրային ծածկագրով հողամասի մասով անվավեր ճանաչել 16.07.2018 թվականի Նորաբաց համայնքի ավագանու N 35 որոշումը:

8) Մասնակի՝ 03-067-0046-0056 կադաստրային ծածկագրով հողամասի մասով անվավեր ճանաչել 27.10.2018 թվականի «Բնակավայրի բնակելի կառուցապատման 0.32Հա հողամասի աճուրդ վաճառք կազմակերպելու մասին» N 128 որոշումը:

Որպես անվավերության հետևանք անվավեր ճանաչել.

- *31.11.2018 թվականին կազմված N 1 Արձանագրությունը.*
- *30.11.2018 թվականի «Մհեր Քոչարյանի հետ բնակավայրի բնակելի կառուցապատման հողամասի օտարման պայմանագիր կնքելու մասին» N 147 որոշումը.*
- *05.12.2018 թվականին Նորաբաց համայնքի և Մհեր Քոչարյանի միջև կնքված անշարժ գույքի առուվաճառքի պայմանագիրը.*
- *10.12.2018 թվականին 03-067-046-0056 կադաստրային ծածկագրով հողամասի վերաբերյալ ՀՀ կադաստրի կոմիտեում կատարված անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցումը (վկայական N 10122018-03-0056)»:*

2. ՀՀ վարչական դատարանի՝ 2023 թվականի օգոստոսի 1-ի որոշմամբ հայցադիմումը վերահասցեագրվել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին:

3. Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի՝ 2023 թվականի օգոստոսի 29-ի որոշմամբ, գործի ենթակայությունը որոշելու նպատակով, այն ուղարկվել է ՀՀ Վճռաբեկ դատարանի նախագահին:

4. Գործը ՀՀ Վճռաբեկ դատարանում ստացվել է 2023 թվականի սեպտեմբերի 25-ին:

<u>Ենթակայության վերաբերյալ վեճի լուծման համար էական նշանակություն ունեցող փաստական հանգամանքները.</u>

5. Հղում կատարելով ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 1-ին հոդվածին, 10-րդ հոդվածի 1-ին մասին, 11-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերին, 81-րդ հոդվածի 1-ին մասին, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 21-րդ հոդվածին, «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասին, 24-րդ հոդվածի 1-ին մասին, ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 463-րդ հոդվածի 1-ին և 4-րդ կետերին, 464-րդ հոդվածի 1-ին և 5-րդ մասերին, ՀՀ Վճռաբեկ դատարանի՝ թիվ ԿԴ3/0174/02/14 գործով 2016 թվականի դեկտեմբերի 2-ին արտահայտած իրավական դիրքորոշումներին՝ ՀՀ վարչական դատարանը 2023 թվականի օգոստոսի 1-ի որոշմամբ հայցադիմումը վերահասցեագրել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին՝ հետևյալ պատճառաբանությամբ. *«(…) Արարատի մարզի Նորաբաց համայնքում գտնվող թիվ 03-067-0046-0065, թիվ 03-067-046-0077 և թիվ 03-067-046-0056 կադաստրային ծածկագրերով հողամասերի արձուրդով վաճառքի վիճարկման պահանջը չի բխում հանրային իրավահարաբերություններից, քանի որ տվյալ դեպքում խնդրո առարկա հողամասերի սեփականատեր Նորաբաց համայնքը՝ Նորաբաց համայնքի ավագանու որոշումներով որոշել է թիվ 03-067-0046-0065, թիվ 03-067-046-0077 և թիվ 03-067-046-0056 կադաստրային ծածկագրերով հողամասերը աճուրդ-վաճառքի միջոցով օտարել՝ հասարակելով մեկնարկային գինը:*

Այսինքն՝ չնայած հիմնական պահանջով վիճարկվող իրավահարաբերության կողմերից մեկը հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտը Մասիս համայնքն է (Նորաբաց համայնքի իրավահաջորդը), սակայն խնդրո առարկա

հողամասերի աճուրդի իրավահարաբերության բովանդակությունը չի կազմում Նորաբաց համայնքի՝ իր հանրային իշխանական լիազորությունների իրականացման պարտականությունը և այդ իրավահարաբերությունը չի ծագել հանրային շահի իրացման կապակցությամբ (իրավահարաբերությունն ուղղված չի եղել հանրային շահի՝ սոցիալ-իրավական պրակտիկայում իրացմանը և առարկայացմանը):

Հետևաբար տվյալ դեպքում հայցադիմումի հիմնական պահանջով վեճը բխում է քաղաքացիաիրավական հարաբերություններից և ենթակա է քննության ընդհանուր իրավասության դատարանում» [1]*:*

6. Հղում կատարելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասին, ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ և 20-րդ հոդվածներին, ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասին, 11-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերին՝ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը 2023 թվականի օգոստոսի 29-ի որոշմամբ արձանագրել է. *«(…) [Ն]երկայացվել են թվով ութ հիմնական պահանջներ, որոնց մի մասի՝ Արարատի մարզի Նորաբաց համայնքում գտնվող թիվ 03-067-0046-0065, թիվ 03-067-046-0077 և թիվ 03-067-046-0056 կադաստրային ծածկագրերով հողամասերի աճուրդով վաճառքի վիճարկման պահանջները թեև բխում են քաղաքացիաիրավական հարաբերություններից և ենթակա են քննության ընդհանուր իրավասության դատարանում, սակայն դրանք լինելով հիմնական պահանջներ՝ բխում են հետևյալ՝*

1) 05.02.2019 թվականի Նորաբաց համայնքի ղեկավարի N17 որոշումը՝ «Համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի հողերից գույքային միավոր առանձնացնելու մասին» անվավեր ճանաչելու.

2) 17.09.2019 թվականին Նորաբաց համայնքի ղեկավարի կողմից կայացված N 136 որոշումը՝ «Նորաբաց համայնքի սեփականություն հանդիսացող բնակավայրի հողերից գույքային միավոր առանձնացնելու, նպատակային նշանակությունը փոփոխելու և հաստատավորելու մասին» անվավեր ճանաչելու.

3) 21.06.2018 թվականին Նորաբաց համայնքի ղեկավարի N 72 որոշումը՝ «Համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի հողերից գույքային

[1] Տե՛ս դատական գործը, թերթեր 70-72:

միավոր առանձնացնելու մասին» անվավեր ճանաչելու պահանջներից, որոնք, ըստ դատարանի գնահատման, ունեն վարչաիրավական բնույթ և ենթակա են քննության ՀՀ վարչական դատարանի կողմից»[2]:

<u>Վճռաբեկ դատարանի նախագահի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

7. Սույն գործով Վճռաբեկ դատարանի նախագահի առջև բարձրացված իրավական հարցը հետևյալն է. *հիմնավո՞ր է արդյոք Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ՎԴ/5796/05/23 գործն ըստ հայցի՝ Ալմաստ Ղազարյանի ընդդեմ ՀՀ Մասիս համայնքի, ՀՀ կադաստրի կոմիտեի՝ միջամտող վարչական ակտերը և դրանց հետևանքները անվավեր ճանաչելու պահանջի մասին, ենթակա չէ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին:*

8. «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասի 1-ին կետի համաձայն՝ *«Մասնագիտացված դատարաններն են՝ վարչական դատարանը, (…)»:*

Նույն օրենքի 20-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարանը քննում է դատական կարգով քննության ենթակա բոլոր գործերը, բացառությամբ մասնագիտացված դատարանների ենթակայությանը վերապահված գործերի»:*

Նույն օրենքի 24-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Վարչական դատարանին են ենթակա Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքով նախատեսված գործերը»:*

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 18-րդ հոդվածի համաձայն՝ *«1. Քաղաքացիական գործերը ենթակա են քննության առաջին ատյանի դատարանում, բացառությամբ «Մանկության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված դեպքերի և հակակոռուպցիոն դատարանին ենթակա գործերի:*

2. Քաղաքացիական են համարվում իրավունքի մասին վեճի հետ կապված բոլոր գործերը, բացառությամբ Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի (…) կամ Սահմանադրական դատարանի իրավասությանը վերապահված գործերի (…)»:

---

[2] Տե՛ս դատական գործը, թերթեր 79-80:

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Վարչական դատարանին ընդդատյա են հանրային իրավահարաբերություններից ծագող բոլոր գործերը, (...)»:*

ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 11-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Միմյանց հետ փոխկապակցված մի քանի պահանջներով գործը, եթե այդ պահանջներից մեկն ընդդատյա է վարչական դատարանին, իսկ մյուսը՝ ընդհանուր իրավասության դատարանին, քննում է այն դատարանը, որին ընդդատյա է հիմնական պահանջը»:*

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ *«Հիմնական է այն պահանջը, որի լուծման արդյունքում կայացված դատական ակտը կանխորոշում է դրանից ածանցվող պահանջների լուծման ելքը»:*

Նույն օրենսգրքի 81-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ *«Վարչական դատարանը, գործի քննության ցանկացած փուլում պարզելով, որ տվյալ հայցադիմումի պահանջն ընդդատյա չէ իրեն, այն պատճառաբանված որոշմամբ վերահասցեագրում է ըստ ընդդատության»:*

9. Հանրային և մասնավոր իրավահարաբերությունների տարանջատման հարցին ՀՀ Վճռաբեկ դատարանն անդրադարձել է *«Վեստ» ՍՊԸ-ն ընդդեմ ՀՀ էկոնոմիկայի նախարարության մրցավոր սեփականության գործակալության* վարչական գործով կայացված թիվ ՎԴ/0830/05/14 որոշմամբ՝ արձանագրելով հետևյալը. *«(...) [Հ]անրային իրավահարաբերությունը մասնավոր հարաբերությունից տարանջատվում է թե՛ սուբյեկտային կազմով, թե՛ բովանդակությամբ և թե՛ օբյեկտով: Այդ տարրերն առանձին-առանձին անհրաժեշտ են, իսկ իրենց համակցության մեջ բավարար են, որպեսզի փաստվի իրավահարաբերության հանրային լինելու հանգամանքը: Իրավահարաբերությունը հանրային հատկանիշով բնութագրելու համար նախևառաջ անհրաժեշտ է, որ հարաբերության կողմ հանդես գա հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտը (վարչական մարմիններ, դրանց պաշտոնատար անձիք, այդ թվում պետական և համայնքային ծառայողներ): Մինչդեռ հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտի՝ իրավահարաբերության կողմ լինելը դեռևս չի նշանակում, որ իրավահարաբերությունը հանրային բնույթի է, քանի որ հանրային բնույթը՝ որպես իրավահարաբերության*

բնութագրիչ, ծավալային առումով ներառում է իրավահարաբերության թե՛ սուբյեկտային կազմը, թե՛ օբյեկտը, թե՛ բովանդակությունը և ի հայտ է գալիս միայն վերոնշյալ երեք տարրերի համակցությամբ: (...) [Հ]անրային է այն իրավահարաբերությունը, որում կողմերից մեկի դերում անպայմանորեն հանդես է գալիս հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտը, որն այդ հարաբերության ընթացքում հանրային շահի իրացման կապակցությամբ իրացնում է օրենքով սահմանված իր հանրային իշխանական լիազորությունները (...)»[3]:

10. ՀՀ Վճռաբեկ դատարանը մեկ այլ՝ *Գոռիշխան Իշիկյանն ընդդեմ ««ԱՐՄԵՆԻԱ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆՆԵՐ» ՓԲԸ-ի և ՀՀ Կառավարության առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության, երրորդ անձ Հռիփսիմե Իշիկյանի* քաղաքացիական գործով կայացված թիվ ԵՄԴ/1029/02/14 որոշմամբ արձանագրել է. *«[Հ]անրային է այն իրավահարաբերությունը, որում կողմերից մեկի դերում անպայմանորեն հանդես է գալիս հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտը, որն այդ հարաբերության ընթացքում հանրային շահի իրացման կապակցությամբ իրացնում է օրենքով սահմանված իր հանրային իշխանական լիազորությունները: Իրավահարաբերության հանրային լինելու և դրանից բխող վեճը վարչական դատարանին ընդդատյա լինելու հանգամանքը պարզելու նպատակով պետք է գնահատման առարկա դարձվեն հետևյալ հանգամանքները.*

1. արդյո՞ք իրավահարաբերության կողմերից մեկը հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտ է, թե՝ ոչ,

2. արդյո՞ք այդ իրավահարաբերության բովանդակությունը կազմում է հանրային իշխանական լիազորությամբ օժտված սուբյեկտի կողմից իր հանրային իշխանական լիազորությունների իրականացման պարտականությունը, թե՝ ոչ,

3. արդյո՞ք այդ իրավահարաբերությունը ծագել է հանրային շահի իրացման կապակցությամբ (իրավահարաբերությունն ուղղված է եղել հանրային շահի՝ սոցիալ-իրավական պրակտիկայում իրացմանը և առարկայացմանը), թե՝ ոչ:

Միայն վերոգրյալ պայմանների միաժամանակյա առկայության դեպքում է հնարավոր փաստել իրավահարաբերության հանրային լինելու հանգամանքը, ինչպես

---

[3] Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *«Վեստ» ՍՊԸ-ն ընդդեմ ՀՀ էկոնոմիկայի նախարարության մրցավոր սեփականության գործակալության* թիվ ՎԴ/0830/05/14 վարչական գործով 2016 թվականի ապրիլի 22-ի որոշումը:

նաև այդ հարաբերությունից բխող վեճերի ընդդատության հարցը՝ հաշվի առնելով նաև այն կարևոր հանգամանքը, որ հանրային հարաբերություններից բխող բոլոր վեճերը չեն, որ վերապահված են վարչական դատարանի քննությանը, քանի որ ՀՀ Վարչական դատավարության օրենսգրքի 10-րդ հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ վարչական դատարանին ընդդատյա չեն Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանի (...) ենթակայությանը վերապահված գործերը, ընդհանուր իրավասության դատարանի ենթակայությանը վերապահված քրեական գործերը, ինչպես նաև պատժի կատարման հետ կապված գործերը»[4]*:*

11. ՀՀ Վճռաբեկ դատարանը, անդրադառնալով մի քանի փոխկապակցված հայցապահանջների հիման վրա հարուցված գործերի առարկայական ընդդատության որոշման խնդրին, *Ռուբեն Միրաքյանն ընդդեմ Երևանի քաղաքապետի և մյուսների* վարչական գործով կայացված թիվ ՎԴ/0476/05/08 որոշմամբ արձանագրել է հետևյալը. *«[Բ]ոլոր այն դեպքերում, երբ ներկայացվում են երկու և ավելի հայցապահանջ, որոնք ունեն տարբեր առարկայական ընդդատություն, ապա գործը պետք է քննվի այն դատարանում, որին ընդդատյա է ներկայացված հիմնական պահանջը»*[5]*:*

12. ՀՀ Վճռաբեկ դատարանը մեկ այլ՝ *Արևիկ Արուչյանն ընդդեմ «ՀԷԳ-90» ՍՊԸ-ի և Դանիել Գրիգորյանի* քաղաքացիական գործով կայացված թիվ ԵԱՔԴ/0433/02/11 որոշմամբ բացահայտել է հիմնական պահանջի հասկացությունը. *«[Մ]իմյանց հետ փոխկապակցված մի քանի հայցապահանջներից հիմնական է այն պահանջը, որի լուծման արդյունքում կայացված դատական ակտը կանխորոշում է մյուս պահանջների լուծումը»*[6]*:*

13. Սույն գործի նյութերի ուսումնասիրությունից հետևում է, որ.

- Ալմաստ Ղազարյանը 2023 թվականի հուլիսի 20-ին հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան ընդդեմ ՀՀ Մասիս համայնքի, ՀՀ կադաստրի

---

4 Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Գոռիշիան Իշիկյանն ընդդեմ ««ԱՐՄԵՆԻԱ» ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՕԴԱՆԱՎԱԿԱՅԱՆՆԵՐ» ՓԲԸ-ի և ՀՀ Կառավարությանն առընթեր քաղաքացիական ավիացիայի գլխավոր վարչության, երրորդ անձ Հռիփսիմե Իշիկյանի* թիվ ԵՄԴ/1029/02/14 քաղաքացիական գործով 2016 թվականի ապրիլի 22-ի որոշումը:

5 Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Ռուբեն Միրաքյանն ընդդեմ Երևանի քաղաքապետի և մյուսների* թիվ ՎԴ/0476/05/08 վարչական գործով 2010 թվականի հունիսի 25-ի որոշումը:

6 Տե՛ս Վճռաբեկ դատարանի՝ *Արևիկ Արուչյանն ընդդեմ «ՀԷԳ-90» ՍՊԸ-ի և Դանիել Գրիգորյանի* թիվ ԵԱՔԴ/0433/02/11 քաղաքացիական գործով 2011 թվականի հուլիսի 27-ի որոշումը:

կոմիտեի՝ միջամտող վարչական ակտերը և դրանց հետևանքները անվավեր ճանաչելու պահանջի մասին[7],

- ՀՀ վարչական դատարանը 2023 թվականի օգոստոսի 1-ի որոշմամբ հայցադիմումը վերահասցեագրել է Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին՝ այն պատճառաբանությամբ, որ սույն պարագայում չնայած հիմնական պահանջով վիճարկվող իրավահարաբերության կողմ հանդիսացող հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտը Մասիս համայնքն է (Նորաբաց համայնքի իրավահաջորդը), այդուհանդերձ խնդրո առարկա հողամասերի աճուրդի իրավահարաբերության բովանդակությունը չի կազմում Նորաբաց համայնքի՝ իր հանրային իշխանական լիազորությունների իրականացման պարտականությունը, ուստի այդ իրավահարաբերությունը չի ծագել հանրային շահի իրացման կապակցությամբ և ընդդատյա չէ ՀՀ վարչական դատարանին[8],

- Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանը, համապատասխան նորմերի վերլուծության արդյունքում եզրահանգել է, որ սույն հայցի հիմքում ընկած իրավահարաբերությունները քաղաքացիաիրավական չեն, և բխում են հանրային իրավահարաբերություններից[9]:

14. Նախորդ կետում մեջբերված փաստական հանգամանքները գնահատելով սույն որոշման 8-12-րդ կետերում վկայակոչված իրավանորմերի և իրավական դիրքորոշումների լույսի ներքո՝ հարկ է նկատել, որ տվյալ դեպքում Ալմաստ Ղազարյանի կողմից ներկայացված հիմնական հայցապահանջների բովանդակությունից բխում է, որ վերջինիս և հանրային իշխանական լիազորություններով օժտված սուբյեկտների՝ ՀՀ Մասիս համայնքի, ՀՀ կադաստրի կոմիտեի միջև ծագած վեճն ըստ էության վերաբերում է հանրային իշխանական լիազորությունների իրականացմանը, այն է՝ համայնքային սեփականություն հանդիսացող բնակավայրերի հողերից գույքային միավոր առանձնացնելուն, որից բխում են նաև Արարատի մարզի Նորաբաց համայնքում գտնվող թիվ 03-067-0046-0065, թիվ 03-067-046-0077 և թիվ 03-067-046-0056 կադաստրային ծածկագրերով հողամասերի աճուրդով վաճառքի վիճարկման պահանջները, որպիսի պայմաններում

[7] Տե՛ս սույն որոշման 1-ին կետը:
[8] Տե՛ս սույն որոշման 5-րդ կետը:
[9] Տե՛ս սույն որոշման 6-րդ կետը:

սույն գործով իրավական վեճը բխում է ոչ թե մասնավոր, այլ հանրային իրավահարաբերություններից:

15. Վերը շարադրվածը հիմք է տալիս փաստելու, որ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանի հետևությունն այն մասին, որ թիվ ՎԴ/5796/05/23 գործն ըստ հայցի՝ Ալմաստ Ղազարյանի ընդդեմ ՀՀ Մասիս համայնքի, ՀՀ կադաստրի կոմիտեի՝ միջամտող վարչական ակտերը և դրանց հետևանքները անվավեր ճանաչելու պահանջի մասին, ենթակա չէ Երևան քաղաքի առաջին ատյանի ընդհանուր իրավասության քաղաքացիական դատարանին, հիմնավոր է:

16. Վերոգրյալի հիման վրա, գտնում եմ, որ Ալմաստ Ղազարյանի հայցադիմումի հիման վրա հարուցված թիվ ՎԴ/5796/05/23 գործը ենթակա է ՀՀ վարչական դատարանի քննությանը:

Հիմք ընդունելով վերոշարադրյալը և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 26-րդ հոդվածով՝

Ո Ր Ո Շ Ե Ց Ի

թիվ ՎԴ/5796/05/23 գործն ըստ հայցի՝ Ալմաստ Ղազարյանի ընդդեմ ՀՀ Մասիս համայնքի, ՀՀ կադաստրի կոմիտեի՝ միջամտող վարչական ակտերը և դրանց հետևանքները անվավեր ճանաչելու պահանջի մասին, ենթակա է ՀՀ վարչական դատարանին:

ԼԻԼԻԹ ԹԱԴԵՎՈՍՅԱՆ